ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳԷՖԷստ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/68 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	atom-sport77	Մարմնամարզական նստարան – Մարմնամարզության նստարանը հավաքովի գույք է, որը բաղկացած է նստելատեղից, տակամասի մետաղական ոտքերից և հենակից: Նստելատեղը և տակամասը պետք է պատրաստված լինեն հատուկ մշակում անցած սոճու կամ խեժափիճինի կամ փշատերև այլ ծառերի փայտից, պարագծի շուրջը և նստարանի անկյունները պետք է լինեն կլորացված 3,00 (± 0,1) մմ շառավղով: Մարմնամարզական նստարանի մակերեսը պետք է լինի խնամքով հղկված, խոնավակայուն և չսահող երկու շերտով պատված բարձրորակ, երեք – բաղադրիչ, անգույն լաքով: Նստելատեղի չափերն են՝ 3000մմ երկարություն, 300 մմ լայնություն և 40մմ հաստություն: Տակամասի չափերն են՝ 2600մմ երկարություն, 100 մմ լայնություն և 37-40 մմ հաստություն: Նստարանի մետաղական ոտքերը պետք է հնարավորություն տան ունենալ 300 մմ բարձրություն, ունենան փակ շղթայանման կառուցվածք, ոտքերի բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորելու հնարավորությամբ: Նստարանի մետաղական ոտքերը և հենակը պետք է պատրաստված լինեն 30x30x2,0 մմ մետաղական քառակուսի խողովակից, միացումները՝ զոդման եղանակով, զոդման կարանները պետք է լինեն հղկված, փոշեներկված բարձրակարգ մուգ մոխրագույն ներկանյութով: Մետաղական ոտքերը, որոնք հպվում են հատակին, պետք է լինեն ռեզինապատ,

		որի դիմացկունությունը պետք է նախատեսված լինի տվյալ նստարանի ամբողջ ծանրաբեռնվածության համար: Մետաղական կառուցվածքը միացվում է միջանցիկ հեղյուսե մանեկային ամրացումով: Նստատեղի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նստատեղի հարթության վրա: Մինչ մատակարարումը՝ ապրանքի նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նշված ապրանքի համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Մատակարարի կողմից: Մատակարարումն ըստ ուսումնական հաստատությունների /պատվիրատուի կողմից տրամադրված բաշխման ցանկին համապատասխան/ պետք է իրականացնի Մատակարարն իր միջոցների հաշվին: Բաշխման ցանկը կտրամադրվի համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 5 աշխատանքային օր հետո: Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական նյութերի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ;Гефест в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/68 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		